№ 28 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ 5 1895 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ 5 № 28

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՉԱՎԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՉԱՎԻՂ

«ՇԱՎԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՎԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱԲԱԹԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մոռացած հարցեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամուսնական խնդիրը Խոյում. Նամակներ Թաշտից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Կովկասից. Նամակ Օդեսայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.

ՄՈՌԱՑԻԱԾ ՀԱՐՑԵՐ

I

Ամիսներ են անցել այն օրից ինչ որ մենք, մատնանիշ անելով մասնաւորապէս Հայկ. երկսեռ վարժարանների վերայ, պարբերաբար խօսեցինք թէ ինչպէս կարելի և պէտք է հայթայթել դպրոցների տարեկան ծախսը, և ապահովել նրանց նիւթականը՝ ցոյց տալինք ակներև միջոցներ և յորդորեցինք հոգաբարձութեանը, որ իսկոյն և եթ ձեռք առնի այդ միջոցները եթէ ցանկանում է, որ իրեն կառավարութեան յանձնուած դպրոցները մէկ հաստատուն հիման վրայ դնել և սպասել որ նրանք կարողանան գոնէ մէկ զգալի արդիւնք ցոյց տալ։

Բայց մեր այդ առաջարկութիւնները չակառակ ազդեցութիւն արին և տեղիք տուին, հոգաբարձական շրջանում, ոմանց, կարծելու՝ որ այդ մտքերը բոլորովին վերացական են և ոչ մէկ շօշափելի միջոց չը կայ օգտուելու նրանցից և թէ մենք առաջնորդ հանդիսանալ ուզելով ոչ մէկ գործնական միջոց չենք ցոյց տալիս, այլ լոկ խօսում ենք։

Արձակուրդները արդէն վերջանալու վրայ են և հազիւ թէ մէկ ամիս մնացած լինի մինչև դպրոցների վերաբացումը. ուստի կրկին դառնում ենք այդ խնդրին, մտադրութիւն էլ չունենալով առայժմ քննադատել հոգաբարձութեան գործառնութիւնները մինչև որ դպրոցները կրկին կը բացուին։

Բայց դժուար էլ չէ մեզ համար հիմակուանից գուշակել մեր դպրոցների ապագայ վիճակը։ Պէտք է խոստովանել, որ այս տարի մեր դպրոցները շատ աւելի վատթար դրութեան մէջ են գտնվում քան երբէք եղել են և էին անցեալ տարի, երբ մատնուած էին անիշխանութեան, և այն ուսուցչական խմբի օրով, որը՝ որպէս յորջորջում են հոգաբարձութեան անդամներից ոմանք, քանդեց քայքայեց, այնքան տարուայ այնքան խնամքով և աշխատութեամբ գլուխ բերուած գործը?...

Թէ անցեալ տարուայ ուսուցչական խումբը քանդեց քայքայեց դպրոցական գործը և թէ որքան ճշմարիտ է այդ զառանցանքը, մեզ այնքան չէ հետաքրքրում, քանի որ նրանք այլ ևս չը կան և այսուհետ կարող են նրանց փոխարինել այնպիսիք, որ կը կարողանան հոգաբարձութեան հետ ձեռք ձեռքի տուած, վերականգնել գործը։

Բայց մենք ասացինք որ այս տարի դպրոցները աւելի վատթար դրութեան մէջ են գտնվում քան երբէք եղել են, և այդ ճիշտ է.1) ոչ դեռ անցեալ տարուայ փոխ առնուած և ուսուցիչներին վճարած գումարները դեռ ևս չէ վճարուել, չէ վճարուել մինչև այսօր նոյն իսկ և Ֆրանսերէն դասատուի անցեալ ամբողջ տարուայ ռոճիկը. 2) եթէ փոխանորդ հօր դունէդուռն ընկած մուրացկանութեամբ հաւաքած ստորագրութեանց գումարներն էլ հաւաքուեն, հազիւ թէ կը բաւականանան անցեալ տարուայ բաց մնացած գումարները գոցելու և դպրոցների ամենահարկաւոր նորոգութիւններն անելու, առանց որոց անբնակելի են դպրոցները, մինչև իսկ վտանգաւոր աշակերտութեան կեանքին. 3) արձակուրդների վերջ է և հոգաբարձութիւնը դեռ ոչ մէկ կազմակերպութիւն չի արել դպրոցների ներքին դրութեան մէջ. դեռ ուսուցիչներ չը կան, դիմուած տեղերից մերժում են ստացել և համարձակութիւն էլ չ'ունին այլ տեղեր դիմելու և եթէ կազմակերպուի էլ (ինչ կարգի դասատուներից էլ որ լինի) ուսուցչական մի խումբ, դպրոցը բիւրջէ չունի նրանց վճարելու, մանաւանդ որ օր. դպրոցն էլ ուզում են բանալ և բարձր բարձր էլ ուզում են թոչել։

Ի նկատի ունենալով սոյն և սոյնպիսի շատ կէտեր, մէջ ենք բերում մի շարք վաղուց ի վեր մոռացած հարցեր. որոնք դիւրութիւն կը տան, մեր «հազիր օղլան բաբասի» հոգաբարձութեան, շօշափելի և իրական դարձնել մեր յայտնած այն ամեն մտքերը և միջոցները, որոնք մինչև հիմա վերացական են համարուել։

Մենք հետզհետէ մատով ցոյց կը տանք հոգաբարձութեանը, այն էլ անուանական կերպով, այնպիսի կուլ գնացած գումարներ և այլ օգուտների աղբիւրներ, որոնցից ոչ թէ կարելի է տարեկան դպրոցական մէկ բիւրջէ կազմել, այլ նոյն իսկ ուղղակի մէկ հաստատուն մեծագումար դրամագլուխ կանգնել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԽՈՅՈՒՄ

Թէև Խոյում կան մի կարգ աչքի ընկնող հետաքրքիր խնդիրներ, որոնց մասին պիտի գրենք հերթով սակայն օրուայ ամենառաջին հարցը ամուսնութեան խնդիրն է որի անկարգութիւնը վաղուց ծանօթ լինելով և ներկայումս բոլորովին չափազանցութեան հասած լինելով ուզեցինք շուտով մի քանի խօսք նուիրել այդ խնդրին։

Ո՞վ չգիտէ վաղաժամ ամուսնանալու վատ հետևանքը, ով ծանօթ չէ նրա ունեցած ֆիզիկական խորտակիչ ազդեցութիւնը. այս բոլորը քրդէն ստուգած են բժշկական հաստատ փորձերով, բայց Խոյում այդ խնդիրը անտես է առնուած և կամաց կամաց հասնում է վերջին ծայր չափազանցութեան. տարէց—տարի քշանում—նուազում է ամուսնական տարիքը։

Դեռ մի քանի տարի առաջ այստեղ ամուսնական տարիքը հասնում էր տղայինը 20-ի իսկ աղջկանը 15-ի, բայց հետզհետէ իջեցնելով, օրէնքից դուրս կարծելով այդ բանը, մէկը իւր քէֆի համար, միւսը իւր հպարտութեան հասցրին ազգի տարիքը 18-ի և աղջկանը 12—13-ի. դրանով էլ չը բաւականանալով, գուցէ շատերը չը հաւատան իրանց ականջին, եթէ ասենք, այս տարի վերջինիս տարիքը հասցրին 9—10-ի։

Այդ երազ չէ, այլ իրականութիւն. փաստ, այս օրերս կատարուած երկու—երեք նշանագրութիւնը։

Մի այդպիսին պատահելով անցեալ տարի, մենք կարծեցինք որոշ միջոցներ ձեռք կառնին առաջն առնելուհամար. հոգևոր իշխանութիւնը՝ որի պարտականութիւնն է, կարծեցինք անուշադիր չի թողնել այդ տեսակ անմարդավայել խնդիրները, բայց տեսնում ենք որ դարձեալ փոզի խնդիր... դարձեալ անիրաւ մամոնան իւր գործը տեսնում է... իսկ մենք կասենք ամօթ, ամօթ. նախ՝ այնպիսի հայրերին, որ իրանց հաճոյքի համար իրանց երթեւեկութեան տեղ ունենալու համար, մատնում են իրանց զաւակներին ֆիզիկական, բարոյական և նիւթական թշուառ և անտանելի վիճակի, իրանց զաւակներին զոհում են իրանց մի—երկու տարուայ ունենալիք յիմար քէֆերին. որովհետև նրանք չեն մտածում իրանց զաւակների ապագայ երջանկութեանը և բարօրութեանը վերայ, և արդէն նրանք փչացած ֆիզիքապէս յետայ ընկնում են և նիւթական անձուկ վիճակի մէջ։ Իսկ իրանց հօրմահուանից յետայ չունենալով մի որոշ ասպարէզ կենաց ընթացքի մէջ փչանում ոչնչանում են ամենաթեթև ձախորդութեան առաջ։

Հրապարակի վերայ ենք դնում մեր՝ Ընդպատականի թեմի առաջնորդի սեպուհ պարտականութիւնը, հաստատ իմանալով որ այս անգամ անուշադիր չի թողնիլ։ Չէ որ իրանց էլ վերաբերում այդպիսի խնդիրների լուծումը. մի հրաման բաւական է ամեն ինչ կարգի դնելու, ուրեմն ինչու լսել—չանել։ Ինչու լուրջ ուշադրութիւն չը դարձնել։

Չըգիտենք ինչով են զբաղած մեր հոգևորականները, երբ այդպիսի ամենակարևոր խնդիրները մինչև կնճռոտ ու անլուծելի են մնում։

Խոյ. 14 յուլիս 95

Ն.

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

24 Յուլիս 95

„Կը սպանենք, կը ծեծենք, կը փշրենք, հոգին կ'հանենք, թող Ռաշտ գալ, նրա հացը թխել ենք, մեզի բիաբաւ է արել“ գոռում են մեր աղաները, վիրաւորուած „Շաւիղի“ հարուածներից։

—Ի՞նչ է պատահել պ. Յորդանեան, ինչու էք բարկացել, հարցնում եմ ես։

—Էս ստորագրութիւնները ինձ հարկաւոր են, ես նրա.... (փողոցային հայհոյանքներ) նա համարձակուել է մեր օրիորդներին անպատուել. Ս...խանի... (դարձեալ հայհոյանք) ամենը նրա բանն է, պատմել է Փ-ին, իսկ վերջինս գրել է „Շաւիղին“։

—Լաւ, եթէ սխալ է կը պատասխանենք. ինչու էք հայհոյում։

—Քեզ վերաբերեալ չի, ես իմ անելիքը գիտեմ—ասաց և ես սուս ու փուս հեռացայ, տեսնելով, որ երբէք չէ կարելի քաղաքավարի խօսքեր լսել նրա բերանից։

Ահա թէ ինչ են ուզում անել մեր կրթութեան գործի զեկավար—աղաները, „Շաւիղի“ յօդուածների դէմ։

Եկէք, հազար խօսեցէք, աշխատեցէք հասկացնել, որ գրչի դէմ սուր չ'են վերցնում այլ գրիչ. անկարելի բան է համոզել, իմ „Շաւիղը“ սա է ասում է ամէն մէկը բռունցքը, կամ ձեռքի փայտը ցոյց տալով։

Էլ ինչ է մնում խեղճ երիտասարդին գործելու, քանի որ մի ինչ որ բաղդախնդիր սուսուցիչ մտնելով աղաների թեւի տակը, ամեն տեսակ ստորութիւններ յանձն առնելով, գրավում է նրանց և լարում դէպի իրեն. աւելի քան մի տասնեակ տարի է, որ աղաների ձեռքում է եղել դպրոցը, ինչ արդիւնք են ցոյց տուել, այդ է հարկաւոր իմանալ. ողորմելիներ, հազար անգամ խոստովանել է՞ք, որ դպրոցական խնդիրների վերայ ոչինչ չը գիտէք, ուրեմն ինչու էք արդելք հանդիսանում նրանց, որոնք շատ թէ քիչ մի բան կարող են

չինել։

Այդ ամենը դեռ մի կողմ, ուզում էք զանազան կեղտոտութիւններ էլ ասել, և ծեծել այս կամ այն ինչ անձնաւորութեան. մի՛ կարծէք, որ այդ կը յաջողի ձեզ. անցաւ այն դարը, որ մարդիկ, գրչի դէմ սուր, իսկ խելքի դէմ գաւազան էին բռնեցնում։

Սուս.

ՆԱՄԱԿ ՌԱՉՏԻՑ

24 Յուլիսի 95

Բ. Սողոմոնեանց. բաւական չէ՞ որքան հարբատարեցիք ռաշտեցիներին, որքան խաղալիք դարձրիք ձեր ձեռքում կրթական գործը՝ դեռ ընկածդունէ՞ ի դուռն համոզել էք ուզում միամիտ ժողովրդին, որ ձեր դէմ գրուածներն սուտ են, և «Շաւիղը» փողոցային թերթ չը պէտք է հաւատալ նրան։

Մի՞թէ կոյր է ամբոխը. նա չէ՞ տեսնում քո բոլոր արարքները որ դուք կաշառում էք նրանց քո խօսքերով. այն ո՞վ էր որ անցեալ տարիները աշակերտներին ներկայացրեց մի ինչ այլակրօն իշխանաւորի (անունը չեմ ուզում յիշել) մի քանի ռուբիներ ձեռք բերելու համար, այն ո՞վ էր որ աշակերտներին ու աշակերտուհիներին առած զատկի տօնին գնաց հիւպատոսարան և արհամարհուած վերադարձաւ։ Մի՞թէ աշակերտք և աշակերտուհիք չէ՞ին, որ քո տունն էին բերում բրինձ, իւղ, հաց, մինչև իսկ դրամ, որպէս թէ դուք խոստացել էիք նրանց այդի տանելու. այդ թող նրանց ծնողները վկայեն։

Ասացէք խնդրեմ այդ ուսուցչի պաշտօն է որ դուք վարում էք, դուք դորանով չէ՞ք ոչնչացնում մատաղ սերունդը, և ստորացնում նոյն իսկ ձեզ հասարակութեան և օտարների առաջ. խոստովանվում է՞ք արդեօք, որ այդ բոլորը ճիշտ են, ինչու՞ էք զրպարտում ուրիշներին, և թոյլ տալիս ձեզ միինչ որազգաւնաս գործակատարի տան մէջ հայհոյել «Շաւղին» և նրան փողոցային թերթ համարել։ Մենք չենք ուզում «Շաւիղը» ձեզ պէս կրթիչների կեղտոտ վարքերովը լցնել և կռուի ու վէճերի ասպարէզ դարձնել, բաւական է որքան նա գրեց, պարկապանեց հասարակութեան առաջ քո բռնած վատ ընթացքները. թող այդ ինքը, հոգաբարձութիւնը հասկանայ։

«Մուրաղ

ՆԱՄԱԿ ԴՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 25 յուլիս 95

Երդէն քանի անգամներ, «Շաւիղ» շաբաթաթերթն, իւր սուղ էջերը նուիրեց մեր անտարբերութեանը և բաւականաչափ զբաղուեց նրանով։ Ցորդորներ կարդաց, նրա վատ հետևանքները ակն յանդիման մեզ ցոյց տուաւ, փաստերով ու ապացոյցներով հաստատեց, որ անտարբերութիւնը մեր յետադիմութեան գլխաւոր պատճառներից մէկն է, սակայն ինչ օգուտ, բոլորը մնաց ձայն բարբառոյ յ՚անապատի, ինչու որ աչքեր ունինք ու չենք տեսնում, ականջներ ունինք ու չենք լսում։

Մեր ամեն հասարակական գործերում անտարբերութիւնն մեծ դեր է խաղում, այնպէս որ բոլոր դործերը ընդ միշտ առ կախ են մնում։ Դիցուք վերցնենք հենց, ամենամօտիկ մի գէպք, ամենապարզ մի օրինակ, Վանաք գիւղի դպրոցի խնդիրը։ Վերոյիշեալ գիւղում վաղուց ի վեր մի պարզ գիւղատնտեսական դպրոցի պէտքը զգացւում էր, մի քանիքարեսէր անձինք նկատեցին, որ եթէ հազար թուման զրամագլուխ դրւի, շատ յաջողութեամբ կարելի կը լինի սկսել գործը և նրա տոկոսով կարելի էր հայթայթել այդ դպրոցի պիտոյքը։ Խորհեցին և գործի ձեռք զարկեցին, բանալով իրանց մէջ 1884 յունվարի սկզբում, մի տանգանակութեան տետրակ, որի մէջ 12 հոգիներ միայն ստորագրեցին 7100 դրան. իսկ մնացեալը յոյս կայ մինչ յառաջիկայ սեպտեմբերը լրացնել, որից յետոյ և հրատարակութեան կը տանք նուիրատուաց անունները և նրանց նուէրների քանակութիւնը, ի գիտութիւն հասարակութեան։

Բայց ցաւ ի սիրտ յայտնում ենք արդոյ ընթերցողներին, որ մեր մէջ կան և գտնվում են այնպիսիք էլ, որոնք միայն ստորագրել գիտեն և վճարել ոչ. այդպիսիներին քանիցս անգամներ խնդրել ենք, բերանացի և գրաւոր, որ բարեհաճին կատարել իրանց խոստում և պարտականութիւնը, և յարգելով իրենց ստորագրութիւն վճարեն խոստացեալ նուէրը, և եթէ միջոց էլ չունեն ամբողջը միանգամից վճարելու գէթ նրա տոկոսը տան ինչպէս օրէնքն է, որպէսզի կարողանանք շուտով գործը սկսել և շարունակել. բայց իզուր ժամանակի կորուստ, շատ ասողին էլ մէկ լսող կուգի *)։

Ցոյս ունինք որ մեր այս նկատողութիւնները, առանց վիրաւորելու այդպիսեաց պատուազգածութիւնը, (որոնց պակասութիւնը քո զարկեալ ենք յանդիմանում) կ՚արթնանան և կը փութան, որպէս պարտաճանաչներ, ժամ առաջ կատարել իրենց խոստում. հակառակ դէպքում պարտաւորուած կը լինենք հրապարակօրէն խնդրել որ, ետ առնեն իրենց ստորագրութիւնը հանգանակութեան տետրակից։

Ի դէպ, ուրախութեամբ պէտք է արձանագրել և այն, որ «մատաղ» վատ սովորութիւնը հետզհետէ վերացւում է մեր միջից. առաջին օրինակը, հանդիսացան Բէքմէղեան և Փռէնտեան ընտանիքները, որ Վառդավառի տօնին, փոխանակ երկու ոչխար մորթելու և մաս մաս հոշոտելով բաժանելու, նրանց գինը, ամեն ոք, երկական թուման նուիրեցին յ՚օգուտ Վանակ գիւղի դպրոցին։

Ռաֆայէլ Ա. Թաղէոսեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր հասած թղթակցութիւններից և հաստատ աղբիւրներից ստուգեցինք վերջապէս, որ Սալմաստից «Շաւիղ» № 16-ում տպուած «Սալմաստի տեսչի վանդալակալութիւն» գրուածքի յայտնած փաստերը լիովին սուտ են և այդ լուրը դարձնուած է թերթիս թշնամիների կողմից, «Շաւիղի» վարկը ձգելու համար։ Մենք եկող անգամ աւելի կը բացադրենք մեր թշնամիների այդ զզուելի դաւադրութեան մանրամասնութիւնները։

*) Քաջ գիտեցիկ միտք է ծագել այդ անձանց գլխում, գիւղում, վերջապէս, գիւղատնտեսական մէկ դպրոց բանալ. բայց գիւղատնտեսական վարժարան ոչ թէ գիւղատիրացական ինչպիսին էր և է այժմ. եթէ ապաղայում էլ լիներուէ նոյնը, հազար անգամ ափսոս է կէս կոպէկ նուիրելն անգամ ինչ մնաց հազար թումաններ...

Յան. Խմբ.

Տեղոյս ընթերցասիրաց դրադարանը. որ մի քանի ամսից ի վեր փակ էր, սկսել է կազմակերպուել և բաց է ամեն գիշեր։ Մի քանի երիտասարդներ, գանձապահի հրաւիրանօք հաւաքուել և ձեռք են առել գրադարանը։ Զարմանալին այն է, որ գանձապահը այս անգամ կ՚գանգատուում է որ տէր դառնալու ձգտումներ է երևում այդ երիտասարդների մէջ։ Ո՞վ է յանցաւոր. հակառակ շատ խորհուրդների չուզեց նա հասկանալ, որ այդպիսի հաստատութիւնները հասարակութեան կը վերաբերեն և ոչ թէ մէկ քանի յաւակնոտ երիտասարդների։

—

Ն. Զուղայիցմեզ ուղարկել են պարզևաբաշխութեան հանդիսի ծրագիրը և այնտեղի «ազգային կեդրոնական դպրոցի քառամսեայ քննութեանց արդիւնքը», վերջինս մէկ վկայական երևոյթ ունի, որի մէջ արձանագրուած են ա. ցկաչած առարկաները և նրանց արդիւնքը և այլն, և որի մէջ ընագիտութիւնը, գծագրութիւնը և հայոց պատմութիւնը իրենց բացակայութեամբ փայլում են, իսկ առաջինում դարսուած են, որքան ասէք, վաղուց ի վեր հնացած և փտած անյարմար երգեր. երևի աւելի շուք տալու հանդիսին։

—

Անցեալ օրեր, Սահակ Ծ. վարդապետ Այվատեանը, հրաւիրում է հետևեալ անձնաւորութիւնները.

Տէր Սահակ քհնյ. Աբրահամեան
Աբրահամ Մելիք Աբրահամեան
Մովսէս Գասպարեան
Իսկեանդեար Վարդանեան
Վահան Մեսրովբեան (?)

Եւ յանձնել է նրանց մէկ ժապաւինեալ տետրակ, որ ժողովարարութիւն անեն ի նպաստ Հայաստանի առանց էն էլ թշուառ սովելոց համար։ Հազիւ թէ շարժուեցին. յոյս ունինք որ ժողովուրդը (թէ այստեղի և թէ Պարսկաստանի միւս քաղաքների) օրինակ վերցնելով թէ օտարները ինչպէս օգնում են մեր դժբաղդ և թշուառ եղբայրներին, ժամ առաջ կ՚աշխատի իւր պարտականութիւնը կատարել, մասնակցելով իւր առատ նուէրներով ի նպաստ իւր տառապեալ եղբօրց գործին։ Մի բան միայն որ ամօթաբեր է ընտրողի համար և վիրաւորական՝ ընտրուած միւս անդամների համար, դա Վահան Մեսրովբեանի անդամակցութիւնն է։ Այդ անձը որ արդէն արատաւորուած է հասարակական գործերի վերաբերմամբ և որ ամբաստանվում է որպէս հասարակական փող ուտող, այդ անձին—շեշտում ենք,—հարկաւոր է լիովին վռնտել հասարակական գործերից, մանաւանդ այնպիսի մի ազնիւ գործի մասնակցելուց, որպիսին է մեր թշուառ եղբայրների գործը։ Վահան Մեսրոբեանը մի երկրորդ Սպանդարեան է Թէհրանի համար, որի մասնակցութիւնը կարող է անպատուութիւն բերել ամէն մի հասարակական գործի։

—

Մեր Դավրէժի թղթակցի այդ քաղաքում պատահած խառնակութեան մասին, յուլիս 27-ին մեզ գրած մէկ նկարագրութիւնից քաղում ենք հետևեալը։ Ամսոյս 22-շաբաթ օրն մի խումբ կանայք փայտեր առած բազարի խանութներն փայտի ուժով կոդպել են տալիս, ապա մարդկանց իրենց առաջ ձգելով խուռն բազմութեամբ, թալանելու մտօք, դիմում են Ղայէմ-Մէղամի տան վրայ (որին կարծում են գլխաւոր պատճառը այն տեղ երկու տարիից ի վեր տիրող թանկութեանը, (որովհետև որպէս ասում են ոչ մի գործի վրայ ուշադրութիւն չէր դարձնում) Ղայէմ-Մէղամիդուան մօտենալուն պէս, յիշեալի ֆարաշները, որոնք առաջօրէն գինուած էին, սկսեցին կրակ անել։ Մօտաւորապէս 20 հոգի սպանուած և նոյնքան էլ վիրաւորուած թողին։ Ժողովուրդը տեսնելով որ եթէ մի քիչ էլ սպասէ սպանուածների թիւը պիտի աւելանայ, սպանուածներից 2 հոգի վերցնելով խուռն բազմութեամբ դիմում է ռուսաց հիւպատոսարան։ Հիւպատոսը քաղաքը չը լինելով (Մամաթաւա էր) սուրհանդակ գնաց նրան կանչելու. երեկոյեան հիւպատոսը եկաւ և. ժողովրդին մի կերպով հանգստացնելով ուղարկեց իրենց տները, խոստանալով որ միւս օրւանից ապահովութեան կը հաստատէ։ 23-ին կիւրակի օրը կը՚կին դիմում են (այս անգամ զինուած) Ղայէմ-Մէղամի տան վրայ, որը գիշերով փախել էր Թագաժառանգի մօտ իւր հետ տանելով թանկագին և արժէքաւոր իրեղէնները. բայց այս անգամ ֆարրաշներին՝ որոնք զինուած կտրումն էին, չի յաջողվում դիմադրել, և ժողովուրդը առաջ գնալով, Ղայէմ Մէղամիտանի դուռը այրում և ներս է խուժում, ձեռքները ընկածը կոտրում, ջարդում և մի մասն էլ յափշտակում ծանում է։

—

Խոյից. յուլիս 24-ին մեզ գրում են հետևեալը։ Այս շաբաթ տեղի ունեցաւ տեղիս ազգային ուսումնարանի տարեկան քննութիւնը, բայց շատ անկանոն կերպով. ամբողջ քննութեան ընթացքում աչքի էր ընկնում նախագահի բացակայութիւնը որովհետև լուր տրուած չէր նրան, ժողովուրդն էլ հօ, սառն էր ու սառն՝ ոչ ոք չեկաւ քննութեան իսկ նրանք էլ, որ կը ցանկանային գալ, նրա կայ գտնուել հրաւիրած չէին, չը գիտէին երբ և որ ժամին էր լինում քննութիւնն։ Կարծում ենք որ գացող տարուայ համար այլևս չի վարձուելու այս տարուայ ուսուցիչը, Խորհուրդ կը տայինք խոյեցիներին որ այս անգամ վարձէին մի ամուսնացած մէկին, որի թէ կինը դաս կը տար աղջիկներին և թէ ղերծ կը մնային զանազան անվայել խօսակցութիւնների առարկայ լինելու ինչպէս էր անցեալ տարի։

—

Մէր գլխաւոր աշխատակիցը, որ մօտ երեք ամսից ի վեր Եւրոպայում ճանապարհորդութեան համար բացակայ էր, վաղը կը ժամանէ Թէհրան։

—

Հրէաները Պարսկաստանից սկսել են գաղթել դէպի Երուսաղէմ և այնտեղից գուցէ պարոն Հիրշի գնած կալուածները. Թէհրանից միայն, այս վերջին 15 օրերում գաղթել են 270 տուն։

—

Ն. Զուղայից ստացել ենք տարբեր անձնաւորութիւններից երկու միանման նկարագրութիւններ, այնտեղի երկսեռ դպրոցի պարգևաբաշխութիւնների. մենք կը տպենք նրանցից մէկը միայն։

—

Օդեսայից մեր գլխաւոր աշխատակիցը հաղորդում է մեզ, որ Ատրպատականի առաջնորդը այնտեղ է և հանքային ջրերով բժշկում է իր... ճարպալիցութիւնը, որովհետև բժիշկները գտել են որ սրբազանը ոչ թէ ոսկրացաւ ունի, այլ որ «սրտի վրայ այնքան եղ է կապել» (իրեն՝ սրբազանի խօսքերն են), որ արեան շրջակայութիւնը խանգարել է։ Այդ ճարպը անշուշտ Ատրպատականի շնորհիւ է։ Սրբազանը յայտնում է որ այլ ևս մտադիր չէ ետդառնալ, որ ինքը սիրում է անդորր կեանք և որ այստեղ շատ հանգիստ է, ամբողջ օրը ճեմում է պարտէզում, միայն մի այրի կին ունի իրը ընկերակից և աշխատում է առողջանալ։ Շատ ուրախ ենք և յոյս ունինք որ վերջապէս ազատուեց Ատրպատականը այդ ճարպոտ առաջնորդից։

—

Ռաշտից մեզ գրում են որ վաշխառուն և իր բարեկամն այս անգամ քարվանսարայի մէջ կեղտոտ հայհոյանքներ էին թափում «Մուրադ» ստորագրողին. կարծելով որ այդ գրողը Բ. Տէր Սարգիսեանցն է։

—

Անցեալ համարի մամուլի տեսութեան մէջ մէկ սխալ է մտել. փոխանակ «ա» և ընթերցասիրաց գրադարանի գրքերը ծախող և ուղղ ամենաազնիւ «գանձապահը» պիտի լինի «գրքերը ծախող և ուտող «Բաֆֆի»-ընկերութեան ամենաազնիւ գանձապահը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Բաթում 1 յուլիս 95

Առ այժմ ուղարկում եմ այս թռուցիկ տպաւորութիւնները։ Մանրամասն յետոյ։

Կովկասի գործարանական երկրորդ քաղաքումն եմ։ Նէֆտն է քաղաքի գործունէութեան նիւթը։ Բագուն Կասպից ծովի միջնորդութեամբ իր նէֆտով ողողում—լուսաւորում է ամբողջ Ռուսաստանն ու Պարսկաստանը, իսկ այս կողմից, Սև ծովի միջոցաւ քարիւղը հասցնում է Հնդկաստան, Եգիպտոս, Եւրոպա և Ռուսաստանի արևմտեան մասերը։ Այստեղի գործարանները, ստանալով գտած նէֆտ Բագուից, լցնում են թիթեղեայ արկղերի մէջ և ճանապարհ ձգում։ Բոլոր գործարանները ուրիշ ոչնչով չեն զբաղված, եթէ ոչ թիթեղեայ արկղեր պատրաստելով և նրանց նէֆտով լցնելու։ Գործարաններում բանում են հարիւրաւոր հայ գործաւորներ, որոնք մեծ մասամբ կամ Սալմաստի ու Խոյի կողմերից են կամ Թբիլիսու, հալածուած թիւրքահայեր։ Անտանելի է գործաւորների կեանքը, կատարեալ դժոխային. մարդ չի կարող առանց յուզելու տեսնել նրանց կերածը, ապրած տեղն ու նրանց բարոյական կեանքը։ Այդ մասին ես խնդրել եմ և մօտ ծանօթ եղողները կը գրեն «Շաւիղի» համար։ № 18 և 19 համարներում էլ փոքր ինչ նկարագրած էր։ Այդ նամակում խօսուած էր երկու գործարանների մասին, որոնցից մէկի—Ծովեանովի կառավարչին էլ քիչ խնկարկած էր։ Զարմէր դրան այդ մարդը. կեղծ բարեգործ, անմիտ հակումներով և փարիսեցիական վարմունքով մի բուրժուա է այդ Խօջամիրեանց կոչուողը, որին յաջողվում է մարդկանց աչքին թոզ փչել, որպէս զի լրագրութեան մէջ գովեստ ստանայ։ Այդպիսի անմիտ բուրժուաներից խաբուել և նրան դովելի գտնել միայն կարելի է այստեղ Ասիայում, իսկ Եւրոպայում այդպիսի տիպերի հոգեբանութիւնը շատ գուեհկացել է, նրանք հասկանալի են եղել և աւելի զզուելի են քան կապիտալիստները. այդպիսի կառավարիչներն են այն փոքրիկ սողունները, որոնք կեղծում են իրենց տիրոջ և նրան սիրելի դառնալու համար ճգմում իրենց ստորադրեալներին, իսկ միւս կողմից աշխատում են ճգմողներին երբեմն մի խայծ ցոյց տալ, որպէս զի աւելի լաւ որսան թշուառների հաւատքը։ Մի խօսքով Խօջամիրեանը գծուծ պրիկաշչիկի մի տիպ է, որից խաբվում են միայն միամիտները։ Այսքան երկար խօսեցի այդ մարդու մասին (չարժէր էլ) որովհետև վերջերս ինչ որ շատ են գովում նրան, նոյն իսկ «Մշակի» մէջ էլ է յաջողվել գովեստ ստանալ, իսկ «Շաւիղում». № 19-ի մէջ դրատուել է մի քիչ,—ի հարկէ գրողն է խաբուել։

Հայ երիտասարդութիւնը այստեղ Բաթումում շատ աւելի թարմ երևոյթ ունի, շատ աւելի եռանդոտ է քան նոյն իսկ Թիֆլիսում. այժմ ամառ է, թէև նրանք ունենում են հաւաքումն, բայց ներկայացումներ չեն տալիս դեռ, դրա համար էլ ինձ չաջողուեց նրանց հաւաքուած տեսնել։ Առանձնապէս լաւ տպաւորութիւն թողին ինձ վրայ Ծովեանեանի գործարանի գործակատարները, բացառութեամբ մի քանիսի. դրանք են, որոնք միացած դրսի ուրիշների հետ կազմում են Բաթումի ինտելլիգենցիան. աշխոյժ, շարժուող, կեանք ունեցող և ձգտումների տէր անձինք, որոնք ոչ այծութեան համար ոչխարներ են զոհում և ոչ էլ հասարակական գործերը իրենց անձնական փառքի գործիք համարում։ Շատ էլ չը գովեմ. չեն աշխատում սակայն զարգանալու, որովհետև ժամանակ էլ չունին։ Թշուառ, խիստ թշուառ են նրանք։ Առաւօտեան 6-ից մինչև երեկոյեան 6-ը, կիրակի օրերն իսկ՝ տանջվում են, էլ սիրտ կամ ոյժ կայ կարդալու, խորհելու, հոգեկան պէտքերը յագեցնելու։ Ընտանիքի տէր և 30—35 բուբլի միայն ամսական են ստանում, էլ որտեղից փող տան գրքի, լրագրի կամ թատրոնի ու կոնցերտի։ Մի կերպով դաշ են սալիս կեանքը. յոգնած, ծիւրուած և լճացած։ Սարսափելի է։ Մարդկային մեքենաներ են, որոնք տանջվում են ամբողջ տարին—օրական 12 ժամ—և ուռեցնում են աղայի փորը, որայդ թշուառ անձերի արիւն—քրտինքն է լափում ու ոչնչացնում զզուելի օրգիաների մէջ և կամ ուրիշ աւելի մեծ խմբեր թշուառացնելու, նրանց էլ քրտինքը խլելու գործին ծառայեցնելու։ Եւ դեռ այդ բաւական չէ։ Հայ Կապիտալիստը ոչ միայն աւելի անմիտ է ու լիմար քան եւրոպացի կապիտալիստը, այլ և աւելի վայրենի է ու անգութ։ Նա ոչ գործաւորի խնայել գիտէ, ոչ էլ գործակատարի։ Մինչդեռ եւրոպացի նրբամիտ կապիտալիստը ոսկեզօծ ցանցերով, փայլուն փաղաքշանքով է որ ծծում է գործաւորի հիւթը. հայը կոպտաբար, վայրենու պէս մրզում է գործաւորին և ապա դէն շպրտում մի ուրիշը ձեռք առնելու համար։ Թէ Բագուի մէջ և թէ այստեղ կը տեսնէք, որ եւրոպացի կապիտալիստը իր գործաւորի և գործակատարի համար շինում է բնակարաններ, ապահովում է նրան ամեն յարմարութիւն և մի տեսակ պարտաւորեցնում է նրանց որ պատկանեն իրեն. իսկ հայը փոլթ չունի թէ որպէս է ապրում գործաւորը և կամ գործակատարի մեծ ընտանիքին հերիք է ամսական 30—35 բուբլի։

Գործաւորների մէջ է վերջապէս, որ Բաթումում, կազմուել է բանւորական միմեանց օգնող ընկերութիւնը և կազմակերպուելով մի տարուց ի վեր, ունի բաւական դրամագլուխ։ Առ այժմ այդ ընկերութիւնը միմիայն Ծովեանեանի գործարանումն է։ Ծիծաղելի է տեսնել թէ ինչպէս գործարանի կառավարիչ—վերոյիշեալ փարիսեցին—լսած լինելով որ այդպիսի բանի քաջալերելիս, կառավարիչները գովասանք են ստանում լրագրով, այնպէս է ցոյց տալիս որ իրը թէ ինքն է եղել ինիցիատորը և այլն. մօտ օրերս գործաւորական ֆոնտը բաց արաւ իրեն անդամների համար հասարակական ճաշարան և ահա մեր կեղծ—բարեգործը սկսեց ասել «ես ճաշարան բաց արի. ես օգնում եմ գործաւորներին»... պարոնի այս ընթացքը նմանում է Պալի սոցիալիստ դառնալուն և կամ թէ կապիտալիստի՝ սոցիալ-դեմոկրատիզմի պաշտպան հանդիսանալուն։

Բայց բաւական է առ այժմ-այդ մասին։ Ուրախալի է սակայն որ ձեռնարկուել է գործաւորներին միմեանց կապող միացնող մի այդպիսի հաստատութիւն. փարիսեցիութիւն իսկ լինի մանր կամ մեծ բուրժուաների քաջալերութիւնը, մինչև մի որոշ աստիճան կարելի է ընդունել. իսկ այնուհետև զգոյշ լինելը անհրաժեշտ է։

Դպրոցների մասին ոչինչ առ այժմ. մի ինչ որ ուսուցիչ է որ միշտ տեսնում եմ, չինովնիկական կոկարդը գըլխարկի վրայ. շատ է սիրում ողորմելին այդ կոկարդը։ Թող մխիթարուի։

Էլի եկեղեցու համար փող են հաւաքում. անցեալ հաւաքածների գանձանակը կորել է. ասում են որ այստեղի նշանաւոր տէր Կոստանդին քահանան էլ հաշուեմատեաններն է կորցրել։ Գիտէք այդ որ տէր Կոստին է։ Դա այն է, որ հրաշալի թղթախաղ գիտէ, բոլոր պառնիկների հաշիւն ունի և ինչքան թիւրքահայ կողոպտած լինի Բաթումում, տէրտէրը դրա մէջ իր առիւծի բաժինը ունեցել է։ Գանգատներ եղել են, գործերը էջմիածին են հասել. Հայրիկը մինչև իսկ ասել է որ մի կերպ անեն և ազատեն իրեն այդ քահանային կարգազուրկ անելուց, իսկ յետոյ Կաթուղիկոսի եղբօր որդի, Գերմանիոյ մանկական պարտէզն աւարտած Խորէնի շնորհիւ, քահանան արժանացել է վարձատրութեան։ Զզուելի լրբութեան մի տիպար է այդ քահանան. մէկը չը լսեցի որ բարեկամ լինէր նրան. փոքր ի շատէ ազնուութիւն ունեցող մէկը... մոռացայ իսկապէս որ վերոյիշեալ Խօջամիրեանը միայն և մի քանի դրա նմանները տէրտէրի մտերիմներն են.—«Ասա ով է բարեկամդ, ասեմ դու ով ես»...

Ն. Փ.

ՆԱՄԱԿ ՕԴԵՍԱՅԻՑ

—

10 յուլիս 95

Մի քանի օր մնում եմ այս քաղաքում և Ռուսաստանից այս նամակս առաջինն ու վերջինը կը լինի գուցէ. վերադառնալիս, եթէ գրելու բան եղաւ կը գրեմ Թիֆլիզից կամ Բագուից։ Մի քանի օր է որ Օդեսա եմ. ասում են որ բաւական թւով հայերը կան այստեղ մեծ մասամբ սափրիչներ, մի քանի էլ հարուստներ— ես ծանօթացայ մի քանի երիտասարդների հետ։ Ուսումնարան էլ կայ 30—35 աշակերտներով, մի վարժապետ և վարժուհի. կայ նաև եկեղեցի, որին տեսնելու գնացի և զարմացայ որ նա հայկական եկեղեցուոյ կերպարանք չունէր թէ զգեստներով և թէ պատկերներով. ասում են որ այդ փոփոխութիւնը այստեղի Խորասանճեան քահանայի շնորհիւն է եղել։ Այս քահանան որ վաղուց ի վեր յայտնի է շատերին, զզուելի ինստինկտներով, ամենակեղտոտ յատկութիւնների տէր մի քահանայ է, որի մասին էլ սխրագործութիւններ չը մնաց որ չը պատմէին։ դեռ չեմ հաշվում ի հարկէ այն, որ եկեղեցուոյ դրամներից անգամ շահվում է. օրինակ հէնց յանուն Էջմիածնի ու Երուսաղէմի եղող գանձանակից, որ բաւական արդիւնք ունի, բայց որը բաց, առանց կնքած լինելով, մեր հերոս քահանայի գրպանն էլ է ուռեցնում։ Ա՜սենք սա դեռ նրա սամենաչնչին քաջութիւնն է։ Զարմանալին այն է, թէ Էջմիածնի հոգևոր վարչութիւնը ինչպէս է հանդուրժում որ այդպիսի զզուելի մաշդիկ քահանայութիւն անեն Օդեսայի պէս մի քաղաքում։ Միտս եկաւ Խրիմեան Հայրիկի, այստեղից անցնելու ժամանակ այդ քա-

հանայի հետ արած խոսակցութիւնը՝ որը աւելորդ չի լինել մէջ բերել այստեղ։

Երբ կաթուղիկոսը հասնում է Օդեսսա, ի միջի այլոց, մեր քահանան էլ է ներկայանում նրան, կրծքի վրայ կախած ունենալով իր բազմաթիւ քաղաքական նշանները։

—Այդ ինչ է, տէրտէր, հարցնում է կաթուղիկոսը—ես որ պատրիարք ալ եմ եղեր, այսքան տարի եպիսկոպոս եմ և այլն, այդքան նշան չունիմ. դուն ինչ բրիր որ արժանացար այդքան նշանի։

—Ցէնդուր եմ, վեհափառ, պատասխանում է քահանան—հայերէն գրքեր եմ նայում։

Կաթուղիկոսը մի լաւ չափում է նրան ոտքից մինչև գլուխ և կծու կերպով—կը տեսնեմ, կը տեսնեմ... ասում է—աղէկ ցենդուր ես եղեր որ այդքան նշան ես ստացեր...

Բայց բաւական է այդ արարածի համար։

Օդեսսան Բեսարաբիոյ թեմն է. այդ թեմի «ժամանակաւոր» առաջնորդն է Յուսիկ II վարդապետն Հայոց... ախ, ներեցէք, քիչ մնաց կաթուղիկոս կարծէի. գովում են քիչ, ասում են աշխոյժ երիտասարդ է. չ'ուզոզի աչքը քոռանայ, աստուած տայ որ «շորը գուրս չը գայ» շուտով. փշից վարդ կը քաղի։ Առաջնորդարանը Քիշնև է, այս տեղից 4—5 ժամ երկաթուղով. չեմ գնալ այնտեղ, ճանապարհիցս դուրս է։ Քիշնևցիք հայերէն չը գիտեն, պատմում են որ մի խղճալի դպրոց ունին. այս թեմը շատ հայուստ թեմ է և որովհետև Կովկասի հայոց դպրոցների ծրագրին չէ ենթարկվում, կարող է 4 դասարանեան դպրոց իսկ լինել։

Էլ ինչ գրեմ Օդեսսայից։ Ասենք, գրելու ընդհանրապէս շատ բան կայ բայց ճանապարհի վրայ եմ, երբ վերադառնամ կաշխատեմ տպաւորութիւններս գրել. հրատարակվում է այստեղ 3 օրաթերթ, որոնցից իւրաքանչիւրը առնազն 10,000 բաժանորդ ունի և մեծ մասը հրէաներ ի հարկէ. որովհետև այս քաղաքը առատ է երկու բանով պոռնիկներով և հրէաներով. պոռնիկների քանակութիւնը անհաշիւ է փողոցներում. քիչ մնացաւ թէ չէ, ուղղակի տղամարդկանց որս են անում կանայք ամենապատաւոր փողոցներում անգամ քարշ գալով։ Իսկ հրէայք... անտանելի են ճշմարիտ իրենց շահամոլութեամբ, վախկոտութեամբ և գծուծութեամբ։ Քաղաքը, կարելի է ասել, որ Ռուսաստանի ամենամաքուր և ամենագեղեցիկ քաղաքն է. Վիէննան է յիշեցնում. թատրոնն էլ Վիէննայի թատրոնի նման է. մի շքեղ պալատ, որի վրայ 1000000 բուբլի ծախս է դնացել. փողոցները բոլորը ասֆալտ քարերով են սալած և որքան էլ որ անձրև գայ, ցեխի նշույլ չը կայ, բայց այժմ սաստիկ շոգեր են. ամէն կողմից այստեղ են լցւել, ծովից և հանքային ջրերից օգտուելու համար. Այստեղ է նաև Ատրպատականի առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը։ Բանից դուրս է գալիս, որ այդ կրօնաւորը ոչ թէ յոգացաւ ունի, այլ ճարպացաւ, այսինքն այնքան ճարպ է կապել, որ քիչ է մնացել խեղդի. խեղճ ատրպատականցիք. էլ եղ մնացել է ձեզ վրայ, որ Սուքիաս եպիսկոպոսը խլած չը լինի։ Մի շքեղ ամառանոցում է ապրում և ինչպէս ինքն է ասում, այլ ևս մտադիր չէ այդպէս «անդորր» կեանքը թողնել և պաշտօն վարել. ատրպատականցոց աչքը լոյս, ազատուեցին յոյս ունիմ։

Հարկաւոր չէ արդեօք մի քանի խօսք էլ ասել այստեղի հայ «ինտելիգենցիայի», մի բուռը հասկացող դասի մասին։ Մեծ հարուստներ կան, բայց նորերումս ցոյց տուին թէ որքան գծուծ ոգի ունին. այդ մարդիկ, որ գրանդ—Օտելի մէջ մի գիշեր հարիւրներ թողնելով, ոչ մի վնաս չեն կրել, խնայում են մի քանի բուբլի տալ թիւրքահայ սովատանջ ու այլ աղէտներից ոչնչացող թշուառ եղբօր համար։ Երբ առաջարկում են ասում են—թող ուրիշները տան առաջ, ես միշտ պատրաստ եմ...

Եւ այդքան տանջելուց յետոյ տալիս է միայն մի քանի բուբլի։ Լոտդիր ստացող շատ քիչ կայ. օրինակ վերջին համար «Մուրճը» կարդալու համար 8 օր է որ փնտռում եմ, թէ ով է ստանում—յայտնի չէ. քաղաքի հասարակական գրադարանն է ստանում, այն էլ ամառայ առիթով այս քանի օրերս փակած է։ «Եաւիղն» էլ քիչ բաժանորդ ունի «Մշակ» երկու օրինակ մ(այն տեսայ Հասարակական կեանք հայերի մէջ—գոյութիւն չունի. մի քանի երիտասարդ են միայն որոնք երբեմն հանդիպում են միմեանց, բայց տէր էլ գաղափարներով այնքան միմեանցից տարբեր են, որ բացի միմիայն մի կէտից (ժամանակակից հարց) միւս կէտերի մէջ հաշտ էլ չեն կարող լինել։ Հայ ուսանող առ այժմ չէ երեւում. ասում են մի քանի հոտ կան։

Վ. Փ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Յիշում եմ Սալդիի «Դիւլիստան» գրածքի մէջ մի փոքրիկ անեկդոտ։ «Բաղդիքում մի մարդ մի խեցիի կտոր է ձեռք առնում և զարմացմամբ նկատում, որ նրանից մուշկի հոտ է գալիս»—«խեցի, հարցնում է նա, այդ որտեղից է հոտդ». խեցին պատասխանում է «մի ժամանակ մուշկի և ամբարի հետ ապրեցի, այդ հոտը նրանից է.—այս առակը երկու դէպքում ես յիշում եմ. մէկը՝ երբ սիրամարգային փետուրներով զարդարած ազռաւների կամ հանդիպում և կամ մեծ մեծ խօսքերով ու ֆրազներով մենամարտող պարոնների, իսկ միւսը՝ երբ «Ցարագի», «Աղբիւրի», և «Անանդ» խմբագիրը պ. Տիգրան Նազարեանցի թղթակցութիւններն եմ կարդում Մոսկվայից, Վիէննայից, Ժընէվից կամ Լոնդոնից գրած։ Մոսկվայում պարոն Նազարեանցը «բադդ է ունենում» ռուսաց հայր Կրոնշտատսկու ձեռքը համբուրել, Վիէննայում՝ զանազան խմբագիրների, «քաղաքական շրջանների» հետ զրուցել, Ժընէվում՝ ուսանողների մասին դատել, իսկ Լոնդոնում—և այդ գլուխ գործոցն է—ահա թէ ինչ է պատահում նրա հետ։

....«Այսօր պատակցութիւն ունէի Էմիլ Դիլլոնի հետ «National libaral Club»-ում։ Այդը Դիլլոն պէտք է տեսնվի Սօլիսբիւրիի հետ։»

Եւ պ. Նազարեանը տեսակցութիւն ունենալով Դիլլոնի, որը պիտի տեսնվի Սօլիզբիւրիի հետ—այն էլ «National liberal Club»-ում, սուզում է հասկացնել, որ ինքը մեծ մեծ մարդերի հետ է տեսնվում և նրանց հետ խորհրդակցում։ Մէկ ձեռքով էր բռնել երեք լրագիրների խմբագրին։ Այս առիթով պատմեմ թէ ինչ է գրում մեզ Բաթումից ծանօթ մի նկարիչ, որին պ. Նազարեանը Վիէննայում հետաքրքիր է փերցրել որպէս թարգման և գանազան լրագիրների գրաքննեանին է մտել։ «պ. Նազարեանը ասում է նա հետ էր Կովկասի մի սեռ խմբի կողմից և պիտի տարբերէր աւստրիական լրագիրներին. թէ ինչու նրանք թոյլ են պաշտպանում հայկական հարցը։ Երեք լրագիրների խմբագիրը ամեն տեսակ մեծ պատուով ընդունեց, որովհետև սոսկում էին այդ մարդուց, որ երեք լրագիրների խմբագիրն էր. որպիսի՞ գլուխ պիտի լինէր անշուշտ (այդպէս էին մտածում մեր մտած խմբագրատան խմբագիրները) և որպիսի մեծ հարստութեան տէր (հրէայ հրատարակիչների պատկառանաց տրտայայտութիւն) այդ պարոնը... և գլուխները խոնարհվում էին պ. Նազարեանցի առաջ. որը կոկոզավիզ, երբեմն այնպիսի անմիտ հարցումներ էր տալիս, որ ես կարմրում էի դեռ չը թարգմանած։ Բարեբաղդութիւն էր երեք լրագրի խմբագրատեսի համար որ գերմաներէն չը գիտէր և թարգմանը եւ էի, ապա թէ ոչ որպէս մեծ մեծ աչքեր էին անելու նրա ասած անմիտ և անբարոյական հարցերի վրայ... արդեօք ճիշտ է, որ նա Կովկասի երիտասարդութեան կողմից է եկել և որ յանձնարարած է նրան Վիէննայումն էլ մի թերթ հրմնել հայկական խնդրի համար, որպէս «L'Armenie»-ն է Լոնդոնում...»

Այս նկարչի ասածն է, թիւ աւելացնենք.չէ՞ որ պ. Նազարեանցի գրած թղթակցութիւններն էլ մշկահոտ խեցու տպաւորութիւնը թողնելով մասամբ հաստատում են մեր տեղեկութիւնները։ Այո, բարեբաղդութիւն է հայոցս համար, որ Եւրոպայում, զանազան լրագիրների և քաղաքական անձերի հետ տեսակցող երեք հայ լրագիրների խմբագրատեսը ոչ մի եւրոպական լեզու չը գիտէ. այդ մեծ բարեբախտութիւն է. յոյս ունինք որ պ. Նազարեանը լաւ զարգացած թարգմաններ ունենալու հոգը կը տանէ։

*** Էհ, բայց, չէ՞ որ երիտասարդութիւնն էլ պակաս անմտութիւններ չէ գործում այդպիսի դէպքերում. դեռ նոր էր (որպէս լուր է հասնում մեզ) որ այդպիսի ծանր գործերի համար զանազան կողմեր են ուղարկում, չը նայելով զարգացած, բայց գանգաղ և էներգիայից ու կամքից թոյլ, խօսելու անընդունակ և գործելու անյարմար անձեր։ Սարսափելի եղբակցութիւնների է հասնում մարդ, երբ այդպիսի երեւոյթների հոգեբանական կողմը քննելով, խորքումը տեսնում է անձնական փառքի տենչանքներ, մի քանի կոմայականութիւններ և զանազան դրազոնների քմահաճոյքներ։

Բայց սա մեր «Մամուլի տեսութեան» բաժնի նիւթ չէր։ Անցնենք։

*** Հոսոսութիւնը Կ. Պոլսից անցել է Կովկաս և շատ աւելի աւերածութիւններ է գործում այդ կողմերում, քան գործել էր նա Կ. Պոլսում։

Հոսոսութիւնը լրագրութեան մէջ էլ է մտել։ Ասնել մի միտք, խփել նրան պատն ի պատ, քրքրել, ջիլերից հիւսել նոր հիւսուածք, բայց այնպէս կոպիտ, որ ծամծմած մտքերը աչք ծակեն, միշտ նոյնը ասել, ջուր ծեծել մեծ մեծ ֆրազներով. պարզ մտքերը մթնացնել ապա սիւնակներ զոհել այդ մթնացրածները պարզելու—ահա թէ ինչ կը հանդիպէք այժմ լաճախակի, Կովկասի հայ թերթերի մէջ։

...«Ապրում կամ ձեզ, երիտասարդութիւն, ժողովուրդ, պատ. հայրենասիրութիւն, ոհ, վայ ազատամտութիւն...» և այսպիսի ֆրազներ գտնել (ի հարկէ ոչ և վայը այժմ մոդայից եկել է և չէ կրկնվում) ամեն մի քայլում կարող էր։ Դրանց զրոյները մեզ յիշեցնում են այն «կայանչի փէշլիվանները», որոնք իսկական փէշլիվանի կապիկներն են, նրա արածներն են ուզում անել, բայց ծամածռելով, խեղաթիւրելով... այդ կայանչի փէշլիվանները հայ գրականութեան մէջ այնքան շատացել են և ականջներիս հնչում է այնքան մոնոտոնարար կրկնուող մտքեր, այնքան թմրեցուցիչ մեզ մօտ ճոռոմ և փքուն բառեր, որ մեզ հասցրել են թէ միշտ կրկնուող բայց լաւ մտքերից իսկ զզուելու՝ պոպիճանի։ Այլ ևս մեզ հոսոսութիւն է թւում, մեր գոհէն է գնում, երբ դեղեցիկ մտքերը կրկնում են, երբ նրանց վրայ վարիացիաներ են պնում։

Եւ այդպիսի վարիացիաներ կոյտերով կարող էր ասենք Կովկասի հայ լրագրութեան մէջ, նոյն իսկ օրւայ հարցերի վրայ գրած։

Նոր միտք, ջղերը շարժող, մեզ տանող մի նոր բանաձև, նոր գրածը—[illegible]։ Գեղարուեստը վոնդուել է լրագրութիւններից. իսկ լաւ մտքերը այնքան կրկնվում են միակերպ ձևով, որ մարդ զզվում է։

Զուտ գեղարուեստական գրածք չկայ—եղաւ 6—7 ամիս—ոչ մի վէպ, ոչ մի լաւ գրածք հայ լրագրութեան մէջ։

Ինչ է դրա պատճառը. միթէ՞ օրւայ հարցը այնպիսի նիւթ չէ, որ գեղարուեստի արժանի լինէր։ Ոչ, պատճառը դրա մէջ չը պիտի որոնել. այլ նրա—որ լրագրութիւնը այժմ մոնոպոլիա է եղել, որոշ անձնաւորութիւնների քմահաճոյքների խաղալիք և գրածքները ոչ թէ դասվում են իրենց արժանիքի համեմատ այլ նրանց գրողի, խմբագրութեան անդամների կամ խմբագրութեան հետ ունեցած կապերի. իսկ որոնք որ հեռու են, նրանք եթէ չեն էլ մերժվում, գոնէ այնպիսի սառն պնտարբերութեամբ են ընդունվում, այնպիսի արհամարհոտ վարմունքների հանդիպում, որ ետ են քաշվում։ Ասպարէզը առ այժմ աւելի ուժգին փչող, ականջ խլացնող չեփորներինն է... հաւքատներ, ետ կանգնեցէք...

Վ. Փ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՑՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Լոնդոն. օգոս. 8-ին. Ռէյտերի գործակալութեան Հոնկքոնկի թղթակիցը հեռագրում է որ երէկ մի կատաղի ամբոխ յարձակվեցաւ Անգլիայի և Ամերիկայի միսիոնարների բնակութիւնների վրայ Ֆոսթշամում. հիւանդանոցները աւերեցին և ուրիշ վնասներ էլ հասցրին։ Միսիոնարներից մի քանիսը փախան և մի քանիսն էլ մնացին իրանց տեղում։ Չինական պատերազմական նաւեր են ուղարկել խռովարարներին ցրուելու և կարգը վերահաստատելու համար։

Լոնդոն. օգոս. 8-ին. Այստեղի չինական դեսպանը բաւական երկար տեսակցութիւն ունեցաւ Լորդ Սալիսբիւրի հետ, որից անմիջապէս յետոյ Կաբինէթը միթինգ դումարեց, չինական կոտորածների վրայ խորհրդածելու համար։ Սիանէյից Հոնկքոնկ գնացող մի նաւ ժայռերի զարնուելով խորտակուել է։ Խեղդուել են 60 հոգի։

Լոնդոն օգոս. 10. Պետերբուրգում խօսվում է որ եգիպտական հարցը վիճաբանութեան կենթարկուի, Ֆրանսիական Պարլամենտի բացուելուց և որ մի փորձ կը լինի, միացեալ դիպլոմատական քայլերով Եգիպտոսը դատարկելու Անգլիացիներից։ Յայտնի է որ Ֆրանսիան, Տաճկաստանը և Ռուսիան պաշտպանում են այդ շարժումը, յոյս կայ որ Գերմանիան կը մասնակցի այդ խնդրին։ Մի զօրեղ հակա-անգլիական հոսանք կայ այժմ գերմանական մամուլի մէջ. թերթերը Անգլիային ամբաստանում են որպէս թէ նա խափանել է Գերմանիայի գաղթականական նպատակները։

Սոֆիա. օգոստոս 10-ին. լուր կայ որ Մ. Սամբուլովին սպանողներից մեկը արձակուած է։

Լոնդոն. օգոս. 12. Սուլթանը հաստատապէս որոշել է թոյլ չը տալ արտաքին վերահսկողութեան հայկական բէֆորմների վերայ։ Մեծ վեզիրը խորհուրդ է տալիս Նորին Վեհափառութեան որ իւր հաւանութիւնը տայ այդ խնդրի մասին, բայց պալատական կուսակցութիւնը ընդդիմանում է դորան և մեծ Վեզիրի դրութիւնը շատ անհաստատ է երեւում։

Ընդհանուր—Հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԱՐԵՆԱՋԱՐԵԱՆ